

Անկասկած եթէ Սինայը սուլթանական բեօիմի տակ անցնի՝ Թիւրքիայի յետևում գործող գերմանական կապիտալիստները իրանց հզօր պաշտպան Վիլհելմի շնորհիւ կարող կը լինեն Մեքքա-Դամասկի երկաթուղային գիծը շարունակել մինչև Սուէց և մօտ ապագայում Անգլիայի հետ Եգիպտոսում նոյն խաղը խաղալ, ինչ որ Ֆրանսիայի գլխին կատարուեց Մարոկկոյում։ Հասկանալի է ուրեմն, թէ ինչո՞ւ այնպիսի ուժգնութեամբ Անգլիան միջոցներ է ձեռք առնում Թիւրքիային այդ ոտնձգութիւններէ յետ կանգնեցնելու համար։ Նրա օգուտն, շահն է այդ պահանջում։ Կէ որ մեր կապիտալիստական դարում շահը արդարացնում է միջոցները։

Լ. Ս.

25 Ապր.

Թիւրքիայի «հայկական» վիլայէթներում շարունակուում է, եւրոպական դիպլոմատիայի լուռ համաձայնութեամբ, երկիրը հայերից մաքրելու քաղաքականութիւնը։ Ամենաչնչին առիթից դիւային անխղճութեամբ օգտուում է Թիւրք կառավարութիւնը՝ բնաջնջման քաղաքականութիւնը սիստեմատիկաբար առաջ տանելու նպատակով։ Բերենք մի քանի նոր փաստեր։

— Զմշկածակէն հասած լուրերուն նայելով, տեղական իշխանութիւնը այս վերջերս շատ խստացուցած է իր բռնութիւնները։ Պոսոյ և Իզմիրի դինամ. դէպքերը այնքան ազդած են Թուրքերուն՝ որ պատճառ կը փնտռեն միշտ հայ ժողովուրդը։ Ջարդելու և կողոպտելու։ Այն հայերը որ բարդուած տուրքերը վճարելու դրամ չունին, կը զրկուին իրենց պարտէզներէն ու արտերէն։ Կառավարութիւնը անսշան գնով մը կը ծախէ գանձ ու դրամները կը գանձէ։ Եւ նոր տուրքերը միշտ կաւելանան։ Հայոց տնտեսական տագնապը երթալով կը ծանրանայ։ Մէկ կողմէն արտերը կը խլուին, որով երկրագործութիւնը անկարելի կը դառնայ, միւս կողմէն ալ կարգելուի օտար քաղաքներ ու երկիրներ պանդխտելը, որով Զմշկածագցին իր ապրուստի գլխաւոր մէկ աղբիւրէն կը զրկուի։ Արդէն տեղին առուտուրը բոլորովին Թիւրքերու ձեռքն անցած է («Լուսաբ.»):

— Հոկտեմբեր ամսի 1-ին, շաբաթ օր՝ երբ նոր պիտի բացուէր արշալոյսը՝ յանկարծ Առվառինճ գիւղը (Տարօն) կը պաշարուի սարէն ձորէն և գիւղացւոց ելևաւտքը կ'արգելուի։ Պաշարողներն էին նախ բազմաթիւ Թուրք զօրքեր՝ մէկ վաշտ Մուշէն և

Առաջ ու Ղարց գիւղերու մէջ մնացած զօրքեր. Առաքելոց վանքի և Պասգիւղի զօրքեր իրենց սպաներով և Մուշէն հասած հազարապետով և ամբողջ ոստիկանութիւնը իրենց պետերով տրուած հրամանին վրայ կը հասնին հոն. պալաքցի, խութեցի, դեղձմերցի բիւրդ աշիրէթներ կըօնամով հաճի Ֆիրօյի հետ. Թիւլայ շէյխերը իրենց արքանեակներով, մահպուպանցի քիւրդեր, Բրդազովի քրդեր, Մուշէն գինեալ թուրքեր, առաջնորդութեամբ Տուրսուն և Արիֆ անուն թուրքերու և այլն և այլն: Այս բազմութիւնը, որ մինչև ժամը երկուքը 3000-ը անցած էր՝ պատրուակերով թէ ձեր գիւղը Ֆէդայի կայ, յանկարծ հազարաւոր հրացաններու պայթիւններով ու գոռում գոչումով գրոհ կուտան գիւղին վրայ, կը յարձակուին, ջարդ և հրդեհ վայրկեանապէս կը սկսին, շատ քստմնելի, շատ անլուր խժգոթութեամբ խուճապը և իրարանցումը սկսած էր գիւղին մէջ, ուր 120 է աւելի թշուառ հայ ընտանիքներ արգելափակ մահուան կը սպասէին... որոտումները, զինուորներու և թուրք խուժանի գոռում գոչումը, ժողովրդի սարսափելի վայնասունը սարերը կը թնդացնէին, բայց ահաւելի կոտորիչներուն երբէք գութ ու կսկիծ չէին ազդեր: Գրոհը գիւղը հասնելուն գիւղի չորս կողմէն զօրքերը հրդեհը բռնկեցուցին և հայ արեան ծարաւները ձեռնարկեցին անմեղ ու անտէր հայ ժողովուրդը ջարդելու, որը ողջ ողջ հրդեհներուն կուտային, որը կը յոշոտէին, որը գնդակահար կը տապալէին անխնայ առանց սեռի և տարիքի խտրութեան... Զարդը կը տնէ մինչև հետեւալ առաւօտն ալ, թէ գիւղի, թէ կալերու և թէ արտերու և մեծագոյն մասը տուններուն մէջ:

Ահա այս թրջական բարբարոսութեան հաշուեկշիռը:*)

Սպանուած են մօտ 95 այր, 22 մանուկ, 13 կին և աղջիկ, բռնաբարուած և անխոստովանելի տառապանաց ենթարկուածներու թիւը ճշտել դժուարին է, աւար ու կողոպուտը բացարձակ և յայտնի, բոլոր տները, եկեղեցի կողոպտուած են, տաւար և ուտեստ թալանուած, տնական կարասի և այլն ջարդ ու փշուր եղած, անակարագրելի խժգոթութիւններ: Այրած են, 5—10 խոտի դեզեր, 5 տուն կայքով, 8 մարագներ լի պարէնով և կալերու մէջ գտնուած արմտիք. մարդու, նիւթական և բարոյական կորուստ անչափելի է, ինչ որ մնացեր են գիւղում, անտէր անտիրական: Արիւնի, վշտի և զարհուրելի տառապանքների մէջ խելացնոր, ցաւատանջ և ահաբեկ կը չարչա-

*) Զոհերի մանրամասն անուանացուկակը բաց ենք թողնում:
Խմբ.

բուին, ողջ մնացող տղամարդերից շատեր չեն համարձակիր իրանց աւեր բոյները դառնալ, վախենալով որ կախաւորութիւն, կոտորիչներին բնաւ ֆրաս չի եղել, մէկ երկու հոգի վիրաւորուել են, այն ալ թերեւ իրենց գնդակներէն. անզէն և խեղճ գիւղացիներ Թնչ կրնային ընել: Մարտափը կը ծանրանայ, մասնաւոր ջարդեր ալ տեղի կ'ունենան: Քորի մէջ (Մասուն) Ասո անուն հայ մը սպանուեցաւ դաբկցի Սէլիմ, Ամօ և Ֆելիթ անուն քիւրդերէն երբ առաջինը ոչխար կ'արածացնէր: Հոկտեմբեր 6-ին ժամը 9-ին զինեալ իսլամներէ սպանուեցան քաղաքին քովիկը դաւաւորիկցի երկու աղքատ տղաքներ 16—18 տարեկան, դիակներ դեռ գետին կը մնան:

Շարունակելու այլևս ուժ չկայ... «Դրօշակ»

—Թիւրք կառավարութիւնը Զէյթունի 1895-ի պատերազմի տաճարամեակը կ'ուզէ տօնել... վրէժխնդրութեամբ: Զէյթունի վրայ չափազանց նեղիչ և անհանդուրժելի հսկողութիւն, բոլոր քաղաքներու մէջ՝ իբր քաղաքական յանցաւորներ՝ երիտասարդներու հաւաքական ձերբակալում, ինչ և ինչ: Ահա փաստեր: Ատանայէն 6 հոգի ձերբակալուելով հոս փոխադրուեցան: Մարտ քանտարիկուած են 25 է աւելի անձինք և մօտերս Զէյթունէն Մարաշ պիտի բերուին 25-ի մօտ նոր ձերբակալուածներ: Զէյթունի դրութիւնը շատ տաճնապալի է: Բաւական ժամանակ զօրանոցի մէջ գտնուող զօրքեր ամբողջ շաբաթներ առանց հանուելու կը պառկէին գիշերները և փոքր առիթ մը կը սպասէին ժողովրդի վրայ յարձակուելու:

Ինչպէս յայտնի է, 1895-ի հաշտութեան պայմաններէն մէկն էր, որ Թիւրք կառավարութիւնը Զէյթունի մէջ զօրք չը պիտի կրնայ մտցնել՝ առանց գիտութեան եւրոպական պետութիւններու: Իսկ վերջին ձերբակալութիւններու առթիւ ահագին թուով զինուորներ մտցած են Զէյթուն: Նշանները լաւ չեն: Թիւրք կառավարութիւնը, կ'երևի, յարմար պոռթ կ'որոնէ իր մշտական ծրագիրը գործադրելու: «Դրօշակ»

—Հալէպից մարտի 5-ից գրուած են նոյն թերթին.

Հայերու դէմ ժամանակ է մ'ի վեր սկսած նոր խստութիւններն և ձերբակալումները կը շարունակուին:

Վերջերս Զէյթունէն, Մարաշէն, Ատանայէն և Հաճընէն նոր ձերբակալուածներ բերին հոս: Առհասարակ աչքի զարնող հայերու վիճակը շատ վատ է, մանաւանդ Զէյթունի հայերունը: Այնտեղի զինուորական հրամանատարը վերջերս մեռաւ: Այս ձերբակալութիւններու և ձեռք առնուած խստութիւններու պատճառը ան էր: Նոր հրամանատարը իր պաշտօնի

գլուխն հասնելուն՝ պիտի սկսի տեղւոյն վրայ քննել խնդիրը և քննութեան արդիւնքը պիտի տեղեկագրէ Հալէպ։ Գլխաւորաբար Ձէյթունի նկատմամբ գործադրուած խստութիւններու հետեանօք տեղւոյն առաջնորդ Խապայեան վարդապետը իր հրաժարական ներկայացուց, որ չ'ընդունուեցաւ։ Հայոց շրջանակներու մէջ կը պատմեն, թէ Ձէյթունի աւագերէց Տ. Կարապետ քահանան այս դործերու մէջ շատ վատ դեր կը խաղայ։

Հալէպի նոր կուսակալ Նազըմ փաշան (Տիգրանակերտէն հոս փոխադրուած) շատ անգութ և միանգամայն հայու դահիճ մըն է, և նա է որ շրջակայ վայրերու մէջ իբր քաղաքական յանցաւոր ձերբակալածները Հալէպ փոխադրել կուտայ, յանցաւորները ինք անձամբ քննելու և դատապարտել տալու։

Ռուսաստանէն նոր դադթած չէրքիզներ՝ թուով տասն հազարէն աւելի, տեղաւորուեցան Կիլիկիոյ որոշ կէտերու վրայ, մասնաւորապէս Ձէյթունի շրջակաները։ Այս անկոչ հիւրերու համար «իանէ» կը հաւաքուի՝ մինչև իսկ բռնութեամբ։ Ամեն տեսակ հարկեր նոյնպէս վերջին ծայր խստութեամբ կը ժողովին։ Ընդհանրապէս Կիլիկիայի վիճակը շատ աննախանձելի է։

— «Բիթլիսի, նահանգապետ Ֆէրիդ-բէյի սպանութեան լուրը՝ հայ յեղափոխականների ձեռքով՝ ապրիլի 6-ին հասաւ Կ. Պոլիս»։

«Pro Armenie»

— Մի քանի օր առաջ դարձեալ հիմնայատակ քարուքանդ են արուել երկու հայ գիւղեր Մշոյ գաւառում— Խէյպեանը և Խաս գիւղը... Ջանքիւարները բնակիչների մեծ մասին սրի են անցկացրել։

Նրանք սպառնում են քաղաքին և դաշտի բոլոր հայ գիւղերին։

Ազգաբնակիւթիւնը սպասում է նոր արհաւիրքների և սարսափների...

«Ալիք»

ՄՈՒՐՃ, 12 ապրիլի